№ 134 Հինգշաբթի Նոյեմբերի 26 1887 Հինգշաբթի Նոյեմբերի 26 № 134

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ТИФЛИСЪ 28 НОЯ 1887 ПОЧТ. КОНТ.

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

ВЪ 1888 ГОДУ

(ПЯТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по нынѣшней программѣ газеты литературной, общественной и политической.

Съ 12-го ноября 1887 г. «Новое Обозрѣніе» выходитъ двумя изданіями, изъ которыхъ *первое*, вечерное, предназначено для Восточнаго Закавказья и сдается на вечерній поѣздъ желѣзной дороги, а *второе*, утреннее,—для гор. Тифлиса, Западнаго Закавказья и Россіи.

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р. 50 к., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Объявленія: на 4-й страницѣ газеты по расчету 5 к. за строку петита или за занимаемое ею мѣсто. На первой страницѣ—15 к. за такую-же строку.

Подписка и объявленія принимаются: ВЪ ТИФЛИСѢ—въ конторѣ изданія, Головинскій просп., домъ кн. Мухранскаго; ВЪ БАКУ—въ отдѣленіи конторы, при аптекѣ Чишковскаго, на углу Барятинской и Милютинской улицъ; ВЪ КУТАИСѢ—въ отдѣленіи конторы, при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

Иногородные адресуютъ свои требованія: Въ Тифлисѣ, въ редакцію «Новаго Обозрѣнія».

Редакторъ М. А. Успенскій.
Издатель кн. З. Р. Тумановъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր դատաստանական թարգմանիչները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Նուխուց. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Նամակ Ֆրանսայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ԾԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ Վասպուրականի հայոց կեանքից.

ՄԵՐ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

—

Տեղական „Новое Обозрѣніе“ ռուս լրագիրը նորից յարուցել է իր վերջին համարում մի շատ հետաքրքիր և մեր երկրի դատավարութեան համար մի նշանաւոր հարց,—այն է մեր դատաստանական թարգմանիչների իրանց պատասխանատու պաշտօնի համար անպատասխան լինելը։

Մեր երկրի դատաւորների մեծ մասը, անտեղեակ լինելով տեղական լեզուներին, այն է՝ հայոց, վրաց և թուրքաց լեզուին, ստիպված են լինում միշտ մեղադրեալներին հարց ու փորձ անել թարգմանիչների միջոցով։ Բայց այս վերջինները մեծ մասամբ թերուս մարդիկ լինելով, որոնք վարձվում են թարգմանիչների պաշտօնով մեր թէ հաշտարար, թէ նահանգական դատարաններում և թէ մինչև անգամ կովկասեան դատաստանական պալատում մի քսան և հինգ, երեսուն, շատ շատ յիսուն ռուբլի ամսական ռոճիկով, անկարող են լինում ճիշդ կերպով թարգմանել մեղադրեալի պատասխանները, կամ դատաւորների ասածները, հիմնաւորապէս չը տիրապետելով ոչ տեղական լեզուներին, ոչ էլ պետական լեզուին։ Այդպիսով շատ անգամ սխալ թարգմանութեան վրա հիմնվելով՝ դատաւորը այս կամ այն սխալ ընթացք է տալիս գործին, այս կամ այն անհիմն վճիռ է կայացնում։ Եւ որովհետև դատաւորները, մեծ մասամբ տեղացիներ չը լինելով և մի բառ անգամ չը հասկանալով կովկասեան տեղական այս կամ այն լեզուից, ստիպված են կատարելապէս հաւատ ընծայել թարգմանչին,—այդ պատճառով և չեն կարող դատավարութեան ժամանակ վերահսկել թարգմանիչների միջնորդութեամբ արած թարգմանութեան ճշդութեան վրա։ Այդ է պատճառը որ արդարադատութիւնը մեր դատաստաններում շատ անգամ կախված է ոչ այնքան դատաւորներից, նրանց հասկացողութիւնից ու խղճմտանքից, որքան թարգմանչի ընդունակութիւնից աւելի կամ պակաս ճիշդ կերպով մեղադրեալի խօսքերը և վկաների ցուցմունքները թարգմանելու։

Տեղական ռուս լրագիրը վերջացնում է իր առաջնորդող յօդուածը առաջարկելով որ գոնէ մեր երկրի հաշտարար դատարաններում դատավարութիւնը, այսինքն թէ մեղադրեալի և թէ վկաների բանաւոր հարց ու փորձը կատարվի տեղական լեզուով, նայելով թէ մեր երկրի ո՞ր նահանգումն է կատարվում այս կամ այն դատաստանը, և ազգաբնակութիւնը ղկնաւորապէս ի՞նչ լեզուով է խօսում,—իսկ պաշտօնական գրագրութիւնը, ի հարկէ, շարունակվի պետական լեզուով կատարվելու։

„Новое Обозрѣніе“ լրագիրը իր ասածները հաստատելու համար բերում է իր յօդուածում բազմաթիւ օրինակներ, թէ ինչպէս թարգմանիչների արած անճիշդ թարգմանութիւնների շնորհով մեղադրվածները դատապարտված են եղել շատ անգամ ծանր և անարդար պատիժների։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Մայրենի լեզու» դասագրքերի կազմող պ. Նիկողայոս Տէր-Ղևոնդեան այս օրերս լոյս ընծայեց իր աշխատասիրած «Մայրենի լեզուի քերականութեան տարերքի» առաջին մասը, որի մի օրինակը մենք ստացանք աշխատասիրողից։ Սա երկրորդ տպագրութիւնն է, և ինչպէս տպված է գրքի կազմի վրա, բարեփոխված տպագրութիւն է։ Ցարաբաղդաբար մենք մեր ձեռքի տակ այս րոպէիս չունենք առաջին տպագրութիւնը, որպէս զի կարելի լինէր համոզվել, թէ որքան յիրաւի բարեփոխված է այս երկրորդ տպագրութիւնը. այսքանը միայն երևում է ամբողջ գրքից, որ աշխատասիրողը աշխատել է հետևել քերականութիւն աւանդելու այն մեթոդին, որը ներկայումս ամենայարմարն է համարվում։ Այդ գրքով աշակերտներին լեզուական և քերականական կանոնները սովորեցնելիս, ուսուցիչը պէտք է նախ օրինակները հաղորդի, և ապա այդ օրինակներից դուրս բերի այս կամ այն կանոնը. դա գրքի ամենաարժանաւոր կողմն է, և այդ ուղղութեամբ միայն կարելի է մեր դպրոցներից դուրս քշել այն հին և անպէտք մեթոդները, որ գործ են ածում մեր հին վարժապետները, աշակերտներին ստիպելով, որ անգիր անեն մեռած քերականական կանոնները։ Սակայն պէտք է խոստովանել և այն, որ պ. Տէր-Ղևոնդեան շատ էլ խստութեամբ չէ հետևում իր սկսած ուղղութեանը. գրքի մէջ շատ են պատահում այնպիսի դէպքեր, երբ մի քանի օրինակներից դուրս են բերվում այնպիսի կանոններ, որոնց ինքը վարժապետը պէտք է նոր օրինակներով և միանգամայն նոր բացատրութիւններով հասկացնի աշակերտներին։ Իսկ դորա հակառակ, կանոնները աւանդելուց յետոյ չափից դուրս շատ օրինակներ են բերված գրքի մէջ. դուցէ դորանով աշխատասիրողը ցանկանում է լաւ տպաւորել կանոնները սաների յիշողութեան մէջ, բայց չը պէտք է մոռանալ որ աւելի լաւ կը լինի, եթէ կանոնները աւելի հաստատ սեփականացնելու համար՝ աշակերտները իրանք գտնէին հէնց իրանց դասագրքի մէջ յարմար օրինակներ, կամ բերանացի և կամ գրաւոր կերպով, ուսուցչի ցուցմունքների համաձայն։ Ի հարկէ, չէ կարելի չը նկատել, որ պ. Տէր-Ղևոնդեանի այդ նոր աշխատութիւնը, որը պէտք է ունենայ երկրորդ և երրորդ մաս ևս, ճանապարհ կը բանայ կանոնաւոր և լիակատար աշխարհաբար քերականութիւն կազմելու, որի անհրաժեշտութիւնը մեր նոր լեզուի համար արդէն զգալի է դարձել. այդ պատճառով, ցանկալի է, որ այդ «Տարերքը» գործադրվի հայոց դպրոցներում։ Ի վերջոյ չենք կարող ուշադրութիւն չը դարձնել մի բան կառնի եկեղեցու մէջ՝ մետաքսի շորով փաթթված Աւետարանը և կը սկսի կարդալ բուրվառով ու զոյգ մոմերով.... Եւ երբ Աւետարանը կը կարդացվի եկեղեցին, պէտք է ամէն մարդ լաւ ականջ դնէ ու հասկանայ նրա միտքը.... Մեղաւորս երբէք չեմ կարդացել սուրբ Աւետարանը, բայց գրեթէ գոց գիտեմ ամբողջը....

Ես, ըստ սովորութեան, աւելորդ համարեցի վիճել այդ մասին ծերունու հետ։ Բայց ինչպէս յետոյ իմացայ, այդ ոչ միայն նրա, այլ բոլոր հին մարդոց կարծիքն է այդ կողմեր և, ինչպէս երևում է, դա մի չատ հին սովորութիւն է եղել հայոց մէջ։ Թէև չեմ կարծում, որ մեր նախնիք այնքան խիստ աչքով նայում լինէին այդ բանին, ինչպէս անում է այսօր մահմեդական աշխարհը Կուրանի վերաբերութեամբ։ Եւ կարելի է ասել աւելին. երբ Կուրանը կարդացվում է մզկիթում, ոչ միայն ժողովուրդը, այլ նոյն իսկ նրա մօլլաները բնաւ բան չեն հասկանում այդ արաբական ընագրից։

Հաջի աղան երբ յոգնի, կը փորձէ քնանալ՝ իր նստած տեղ կամ քիչ երկննալով։ Երբեմն մանկը դայ խարխափելով ու փայտը ձեռին՝ սենեակի, բակի կամ այգիի մէջ։ Կը զուարճանայ նոյնպէս տան փոքրիկ տղաների հետ։ Երեկոյեան, ի հարկէ, կերթայ նորէն եկեղեցի։

Այսպէս են անցնում մուղսի Յոհան աղայի օրերը.... Քանի մի տարի առաջ, երբ նա գնա խանութ էր գնում, իր գրականական պարապմունքները վերապահված էին միմիայն կանուխառաւօտներին։

—

Գ

Իմ սովորական այցելութիւնքը ի Զըթչենց տուն շարունակվում էին, բայց ես չէի յաջողում ի մօտոյ ծանօթանալ մուղսի Յոհան աղայի անձնական համոզումների հետ։ Նա, ինչպէս արդէն ասել եմ, շատ չէր սիրում դատողութիւններ անել. նա աւելի ուրախ կը լինէր, երբ միջոց տայիք պատմել իր հին կեանքի էպիզոդները։ Ինձ թւում էր, թէ նա այդ անում էր մանաւանդ այն պատճառով, որ իր համաքաղաքացիների ներկայ վիճակի վրա խօսելը միշտ յուզմունքի մէջ էր ձգում նրան։ Այսպէս թէ այնպէս, բայց նա առիթ չէր փախցնում մէջ բերել շարունակ իր սիրած պատմութիւնները, ինչպէս մենք այդ տեսանք հրէից խնդրի առիթով։

Բայց ինձ չափազանց հետաքրքրում էին նրա անկեղծ հայեացքները իր հայրենակիցների ներկայ հանգամանքների վրա։ Եւ այդ մանաւանդ այն պատճառով, որ հաջի աղայի օրերը հաշուած էին և այսօր չէ վաղ մենք պիտի զրկվէինք նրանից։ «Ահա մի սերունդ—մտածում էի ես—որ մարելու վրա է. պէտք է լսել նրա վերջին խօսքը այն մարդոց վրա, որոնց նա յանձնում է իր տեղը, յոյսն ու իդէալը։» Ճիշդ է, որ պակաս չէին ուրիշ ծերունիներ էլ, բայց հաջի աղան մէկ չատ տարբեր նմուշ էր և ես ունէի իմ պատճառները նրա համոզումներին էլ առանձին դին տալու։

Ուստի պէտք էր ինձ տեսնվել նրա հետ առանձին, լոյս ցերեկով։

Բայց այդ այնքան դիւրին չէր։ Երկրի սովորութիւնը արդէն անտեղի էր կացուցանում ցերեկայ այցելութիւնքը։ Ամէն մարդ այդ ժամանակ գործի վրա է, տնէն դուրս է, շուկան է։ Գալով Զըթչենց պէս մի նահապետական գերդաստանին՝ նոցա բազմաթիւ կանայքն ու աղջիկները միշտ վիտում են բակի մէջ, որով մի տղամարդի համար վայելուչ չէ այդպիսի տեղեր յաճախ ելումուտ անել։ Ուրեմն պէտք էր մի նշանաւոր պատրուակ։

Մէկ առաւօտ բարակ անձրև էր մաղում։ Հետզհետէ հատիկները մեծնալով՝ կէսօրին մի փառաւոր հեղեղ եկաւ։ Մէկ ժամից յետոյ, ինչպէս սովորաբար այդ պատահում է, ամէն ինչ վերջացաւ. մինչև իսկ ամպերի մի պուճախից արևն երևեցաւ։ «Էլ սրանից լաւ առիթ չեմ ունենայ» մտածեցի ու դիմեցի ուղղակի Զըթչենց փողոցը։

Բարեբաղդաբար հաջի աղային գտայ փողոցի դրան վրա։ Այնտեղ նստած, դիտում էր նա յորդացած առուները ու զովանում փողոցի խոնաւ օդով։

—Պ. Պետրոսը վերն է, հաջի աղայ,—հարցուցի ես բարևելուց յետոյ։

—Չէ.... քաղաքն է, բիւթիւնն էլ քաղաքն են։

—Այս եղանակին քաղաքն ինչ կանեն.... ես կարծեցի ամենքն էլ տունն են,—յայտնեցի նրան սուտ զարմանքս։

—Գնացին գեոյ *).... գործի մարդ են, գործի մարդ են, տուն մնան ինչ անեն...

—Լաւ. բարևէք իմ կողմից երբ որ գան....

*) «Գնացին գեոյ». այս դարձուածը անթարգմանելի է և յատուկ միմիայն վասպուրականցի հայոց։ Մօտաւորապէս նշանակում է. «գնացին հա» կամ «գնացին ահա»։

Մ Ա Հ Ա Ն

Ամերիկայի Հայ Դաշնակցութեան Ազգային Խորհուրդի նախագահ Մ. Ա. Հ. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ի

վճարել քաղաքային ներկայացուցիչների պահանջած տուրքերը, քան թէ թոյլ տայ, որ իր ապրանքը իսպառ փչանայ և իր անձնական պատիւն էլ վտանգի ենթարկվի ղանաղան վաչխառուների, կամ ոստիկանութեան ստորին պաշտօնեաների ձեռքում։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նոյեմբերի 23-ին, կէսօրից յետոյ, Թիֆլիսի բուլվարի ամենանշանաւոր տեղում, Միրիմանովի տան առջև մի կռիւ պատահեց. բայց այս անգամ կռուողները ոչ թէ կինտոներ էին, որոնք բուլվարի վրա կռուելու չափ դեռ չեն լուսաւորված, այլ երկու լուսաւորված պարոններ, կոկ հագնված, և ոչ-հասարակ մահկանացուներ։ Դրանցից մէկը հայ էր, Կ. աղգանունով, իսկ միւսը մի կօկարդաւոր վրացի, նոյնպէս Կ. աղգանունով։ Կռիւի, պատճառը ինչպէս ասացին, փողի հաշիւ է եղել, որը և ստիպեց երկու պարոններին բացարձակ մուշտի կռիւ սկսելու։ Տարաբաղդաբար պոլիցիական էլ չը կար, որ բաժանէր կռուողներին, որոնք երկար ծեծվելուց արդէն բաւական յոգնել էին, այնպէս որ երբ մի պարոն մօտեցաւ նրանց բաժանելու, նրանք արդէն իրանք իրանք բաժանվեցան, միմեանց հասցէին ամենազզուելի հայհոյանքներ ուղղելով։ Կռուողներից մէկի երեսից մի քանի տեղից արիւն է հոսում, իսկ միւսի բութ մատը դուրս էր ընկել։ Միմեանց բաժանվելուց յետոյ բուլվարի հերոսները իսկոյն հեռացան,—մէկը գնաց իր երեսի արիւնը լուանալու, իսկ միւսը գնաց իր դուրս ընկած մատը տեղը դցելու։

—

Զանգեզաղուր գաւառի Արծուանիկ գիւղից մեզ գրում են. «Զանգեզաղուր գաւառի ներկայ զինուորագրական ատեանի երրորդ բաժինը գտնվում է Մեղրի գաւառի Արծուանիկ հայաբնակ գիւղի մէջ, ուր որ ամսիս 15-ից զինուորագրական ատեանը սկսեց իր գործունէութիւնը։ Վիճակահանութեան հրաւիրված 279 նորակոչները պիտի տային 23 նորընտիր զինուոր։ Ատեանը զբաղված էր տարբերական ուսումնարանում, ուր որ անդամներից մէկը ի լուր ամենքի ամսի 15-ին, կարդաց այն մարդկանց անունները, որոնք օգտվում էին ընտանեկան դրութեան առաջին և երկրորդ կարգի արտօնութիւններով։ 16-ին ատեանը որոշեց մի քանիների հասակը արտաքին տեսքին նայելով, ապա տեղի ունեցաւ վիճակահանութիւնը և 17-ին վերջացաւ։ 18-ին 23 նորընտիրներին ենթարկեցին երդման։ Ամսիս 19-ին Մեղրի գաւառակի 13 հայաբնակ և հայ ու թրքաբնակ չինական հասարակութիւնների տանուտէրերը և զինուորագրական ատեանի անդամները չքեղ կերպով մի տեղական զուռնայով ճանապարհ դրեցին նորընտիրներին դէպի Գօրի քաղաքը, իսկ վիճակահանութիւնից ազատվողները ստանալով իրանց կարմիր տոմսակը՝ դարձան տուն»։

—

Գանձակի նահանգի զինուորագրութեան վերաբերութեամբ մեզ ուղարկված են հետեւեալ տեղեկութիւնները։ 3918 ցուցակագրվածներից 316 հոգի պէտք է զինուոր լինէին, հետեւեալ կարգով. 1. Գանձակի գաւառի 446 հոգուց՝ 34 հոգի. 2. Ջիվանշիրի 216 հոգուց՝ 18-ը. 3. Կազախի 470-ից՝ 38 հոգի. 4. Նուխիի 336-ից՝ 26 հոգի. 5. Արեշի 211-ից՝ 16 հոգի. 6. Շուշիի 1009-ից՝ 83 հոգի. 7. Ջիբրայիլի 114-ից՝ 11 հոգի և 8. Զանգեզուրի 1106-ից՝ 90 հոգի։ Վերջինս զինուորագրական ատեանը ունի երեք բաժին. առաջինն է Գերուսի, որի 428 վիճակահանութեան հրաւիրվածները տուին 35 նորակոչներ, երկրորդն է Սիսիանու Ղարաքիլիսէն, որի 399 վիճակահանութեան հրաւիրվածները տուին 32 հոգի, իսկ երրորդն է Մեղրիի Արծուանիկը, որի 279 հրաւիրվածները տուին 23 նորընտիրներ։

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամները հրաւիրվում են ներկայ լինել ընկերութեան ընդհանուր ժողովին, որը կայանալու է այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 26-ին, երեկոյեան $7^1/_2$ ժամին։ Հերթական հարցերը վերջանալուց յետոյ, ժողովը կը զբաղվի պ. Արասխանեանցի «Համայնական միջոցներով արքունի ամբարներին հաց մատակարարելու» վերաբերեալ զեկուցման քննութեամբ, և ապա կը լսի պ. Վ. Գէեվկոնդեկուցումը Խարկովի ցուցահանդիսի առիթով։ Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք։

—

Այս շաբաթ Թիֆլիսի թատրոնում տրվեցան երկու հանդիսաւոր ներկայացումներ. երկուշաբթի, նոյեմբերի 23-ին, լրացաւ 45 տարին, որ ռուսաց երևելի երաժիշտ Գլինկայի «Ռուսլան և Լիւդմիլա» օպերան ներկայացվեցաւ առաջին անգամ բեմի վրա. իսկ երեքշաբթի օր լրացաւ տաս տարի, որ այժմս բոլորովին ձայնը կորցրած երգիչ պ. Լոզի առաջին անգամ բեմ է դուրս եկել։ Երկուշաբթի օր ներկայացվեցաւ «Ռուսլան», իսկ երեքշաբթի Բոսսինիի «Սեվիլիայի սափրիչը» (Севильскій цирюльникъ)։ Երկու անգամն էլ թատրոնը կատարելապէս լի էր։ Պ. Լոզի ստացաւ շատ նուէրներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Պոլսի լրագիրները հաղորդում են, որ Ազգային վարչութիւնը հրաւիրել է Էրզրումի Սանասարեան դպրոցի հիմնադրի ուշադրութիւնը «իւր Կարնոյ վարժարանին, ի Կարին կառուցման համար ծադած դժուարութեանց վրա» և խորհուրդ է տուել նրան մի աւելի նպաստաւոր տեղ ընտրել, ուր վարժարանի կառուցումը շատ հեշտ կարող է լինել։ Վերջին տեղեկութիւններից երևում է, որ մտադրութիւն կայ Սանասարեան դպրոցը Խարբերդ փոխադրել. կան և այնպիսի մարդիկ, որոնք միանգամայն նպատակայարմար են համարում դպրոցը փոխադրել ոչ թէ Խարբերդ, այլ Սեբաստիա։ Սանասարեան վարժարանի կողմից երկու անձինք արդէն այդ նպատակով եղել են Խարբերդում և Սեբաստիայի կողմերում։

Ակնայ գաւառի Լիճք հայաբնակ գիւղում երևացել է մի տարափոխիկ հիւանդութիւն, որին կարճ միջոցում զոհ են դնացել քառասունից աւելի մարդիկ։ Վարակվողները ամենից առաջ տենդ են ունենում, ապա գլխացաւ, և մէջքի ցաւ, որից յետոյ և մեռնում են։ Բժիշկ չը լինելու պատճառով յայտնի չէ թէ այդ ինչ հիւանդութիւն է։ Գիւղացիք մի հանրագիր են պատրաստել և ուղարկելով ներքին գործերի նախարարին խնդրել են, որ բժշկական օգնութիւն հասցնվի իրանց։

Կ. Պոլսի հայոց Միացեալ-Ընկերութեան վարչութիւնը ընկերութեան պատուոյ անդամ է ընտրել Օսմանեան Կայսերական բանկի ընդհանուր տնօրէն պ. Ֆոստերին։ Պէտք է ասել, որ ծերունի անգլիացին բաւական օգնութիւն է ցոյց տուել Միացեալ-Ընկերութեանը, նպաստելով նրան նիւթականի կողմից։ Միացեալ-Ընկերութիւնը այդ առիթով մի պատուիրակութիւն է ուղարկել պ. Ֆոստերի մօտ։

Բոլգարների Պոլսի էկզարխի կողմից, ինչպէս հաղորդում է «Արևելք» լրագիրը, մի եպիսկոպոս է եկել հայոց պատրիարքարան, և ցաւակցութիւն է յայտնել հայոց պատրիարքի հրաժարականի համար։

Կիլիկիայից տեղեկութիւններ են հասել Պոլսի հայոց կրօնական ժողովին, որ այնտեղ կրօնափոխութիւնը օրից օր զարդանում է անհովիւ հայերի մէջ։ Կրօնական ժողովը վճռեց այդ մասին տեղեկութիւններ հարցնել Սիսի կաթողիկոսից։ Նոյն օրը նոյն ժողովը վճռեց հեռադրել Սիսի կաթողիկոսին, որ նա Զէյթուն դնայ և մնիթարի այնտեղի հրկիզեալ հայերին։

Բայց ինչ կարող է անել քաղցած և անտուն մարդուն լոկ մխիթարանքը։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Մօնպէլիէ, 18 նոյեմբերի

Մի երկու փաստեր լինձ տեղիք են տալիս գրիչ ձեռք վերցնելու և կրկին հաստատելու այն բաղմիցս անգամ հաստատված «ակսիոման» թէ չարչիութեան հողին սաստիկ խորը արմատներ է գցել մեր հայերի մէջ, թէ հայերը ամեն մի հանդամանքում կօպէկների հաշիւ են տեսնում և միշտ ուզում են, որ շատ քչով ահագին բաներ ստանան։

«Մշակի»-ի № 116-ում տեղիս ուսանող պ. Մուսինեանց մի յօդուածում մի քանի տեղեկութիւններ էր հաղորդել տեղիս կեանքի ու ուսման վերաբերեալ, և կարճառօտ հաշուելով, ասել էր, որ 80 ֆրանկ ստանալով կարելի է այստեղ միջակ ապրել (աւելի լաւ ասած, մի կերպ գլուխը պահել)։ Եւ ահա թէ ինչ հետեւանք է ունենում այդ յօդուածը. տեղիս ուսանողներից մէկը, որ ստանում էր ամսական ոչ 80 ֆրանկ, այլ 120 թէ 130 ֆրանկ (ճիշդը չեմ յիշում) ստանում է իր հօրից փոխանակ իր սովորական ստանալիք 130 ֆրանկի, միայն յօդուածագրի նշանակած 80 ֆրանկ մի մեծ նախատինքի հետ, որով հայրը նախատում է իր որդուն, ասելով որ վերջինս այսքան ժամանակ աւելորդ փողեր է ստացել, իզուր ծախսեր է արել, մինչդեռ 80 ֆրանկը «բոլոր բոլորն» բաւական է։ Սոյնանման դէպք պատահեց անցեալ տարի և Ժընէվում. պ. Զ. նոյնպէս տեղեկութիւններ էր տուել Ժընէվի կեանքից և հաշուել էր թէ «minimum» հարկաւոր է ունենալ ամսական 35 ռուբլի, և ահա մէկ ուսանող, որ ստանում էր ամսական ոչ 35 ռ., այլ 60 ռ., ստանում է իր եղբօրից, փոխանակ իր սովորական 60 ռ., 40 ռ. միայն, «Մշակի» այն համարի հետ, ինչտեղ զետեղված էր պ. Զ.-ի յօդուածը և մի նամակ նոյնպէս չարչիական նախատինքներով։

Ինչ են ցոյց տալիս այս փաստերը։ Արդեօք սա չարչիութիւն չէ։ Այդ տեսակ պարոնները չեն կարողանում հասկանալ, որ այդ յօդուածները, այդ տեղեկութիւնները ուղարկվում են այն նպատակով, որ երիտասարդներից շատերը չը դան այստեղ, կարծելով թէ Եւրօպայում ամեն բան մուֆտա—առանց փողի է, ամսական 15—20 ռուբլի ձեռք բերելով, վազում են արտասահման ուսում շարունակելու և դալով արտասահման հազար ու մի նեղութիւններ ու չարչարանքներ են կրում. ոչ կարողանում են ուսում ստանալ և ոչ կարողանում են վերադառնալ. օրինակ, տեղս երկու վրացիներ կան, որոնք ահա մէկ տարի է ինչ որ ամենաթշուառ դրութեան մէջ են և չեն էլ կարողանում հայրենիք վերադառնալ։ Ցանկալի է որ այդպիսի դէպքեր չը կրկնվեն և եկողները գոնէ փոքր ի շատէ ապահոված լինեն։

Երկրորդ, մեր չարչիները չեն կարողանում հասկանալ, որ զանազան տեսակ ապրել և ուսում ստանալ կայ. այստեղ կարելի է 30 ֆրանկով ճաշ և 15—17 ֆրանկով սենեակ գտնել, իսկ Ժընէվում աւելի էժան. 24 ֆրանկով ճաշ և 10—12 ֆրանկով սենեակ։ Բայց այդ ճաշերը ու սենեակները թէև էժան են նստում, իսկ դոցանից ստացած՝ կատարը, բեվմատիզմ, թոքախտ և այլ հիւանդութիւնների բժշկվելը էժան չէ նստում։ Ինչ ասել կուզէ, բանտորներ էլ կան, որ 60—70 ֆրանկով ապրում են, բայց վայ այն ապրուստին։ Նոյնը կարելի է ասել և ուսման համար. մեր չարչիները ուսման փող հասկանում են միայն համալսարանի լէկցիաներին վճարելիք փողը, էլ չեն կարողանում հասկանալ, որ ուսանողին բաւական չէ միայն լէկցիաներ լսել։ Նորան հարկաւոր են և գրքեր, թէ իր մասնագիտութեան վերաբերեալ և թէ իր մտաւոր զարդացման համար, հարկաւոր է դրադարան, լրագիր և այլն, իսկ այդ բոլորը առանց փողի չեն, և կարող եմ ասել որ աւելի թանդ են, քան թէ Ռուսաստանում, որովհետև պահանջը շատ է։ Գրքերը երկու-երեք «աբասանոց» չեն, այլ մասնագիտութեան վերաբերեալ գրքերը 5-ից մինչև 100 ֆրանկ հատը։ Բացի այդ, ուսումնական տարվայ շրջանում լինում են և ճանապարհորդութիւններ, «excursion»», որոնք նոյնպէս ձրի չեն և իւրաքանչիւր ճանապարհորդութիւնը առնուազը 10—20 ֆրանկ է նստում։ Հեռու ճանապարհորդութիւնները, որոնք տեղիս գիւղատնտեսական ուսումնարանում շատ յաճախ են լինում և տեւում են մի քանի օրերով, նստում են 40—50 և աւել ֆրանկ...։ Իսկ այդ ճանապարհորդութիւնները անհրաժեշտ բաներ են, եթէ ուսանողը ուզում է իսկապէս լաւ սովորել իր ընտրած ճիւղը։

Բացի այս բոլորը կայ և մէկ բան, որը ուշադրութեան արժանի է, այն է, որ Եւրօպայի ուսանողների և Ռուսաստանի ուսանողների մէջ հագուստի կողմից էլ մեծ զանազանութիւն կայ. որքան վերջինները հասարակ և նոյն իսկ անփոյթ են հագնվում, այնքան առաջինները չքեղ և լաւ են հագնվում, ուստի ռուսաստանցի ուսանողները, որոնք ուսանում են Եւրօպայում, նոյնպէս ստիպված են, եթէ ոչ չքեղ, գոնէ լաւ, մաքուր հագնվելու, հակառակ դէպքում նոքա շատ խորթ ու ծիծաղելի կերևան։

Գուցէ մեզ կասեն թէ շատ փող ստանալով կարող են շռայլութիւն անել։ Բայց ես կասեմ որ շռայլ երիտասարդը քիչ փողով էլ շռայլութիւն կանի՝ նա իր բերանից կը կտրի և շռայլութեան համար փողեր յետ կը դցի, իսկ բարոյական—զարդացած երիտասարդը հազարներ էլ ունենայ, իր չափից չի դուրս դայ, ուստի շռայլութիւն անելը կախված է երիտասարդի մտաւոր զարդացման աստիճանից։

Ռ. Խան-Ազատեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Արտասահմանից Գերմանիա բերվող հացահատիկների մաքսահարկը չատացնելու դէմ բողոքել են գերմանական առևտրական ժողովը և Կեօլնի առևտրական ժողովը։

—Փարիզից հեռագրում են, որ Գրէվի զաւառներից բազմաթիւ նամակներ է ստանում, որոնցով նրան համակրութիւն և յարգանք են յայտնում։

—Պէտք է նկատել, որ վերջին օրերումս Ֆրանսիական հանրապետութեան նախագահի ընտրութեան առիթով Ֆերրիի դէմ կատաղի ցոյցեր եղան. Փարիզի փողոցներում կպցրած էին զանազան յայտարարութիւններ, որ Ֆերրիի նախագահ ընտրվելը յեղափոխութեան նշան և սկիզբ կարող է լինել։ Նոյնպիսի ցոյցեր արեցին սոցիալիստները դեներալ Սոսիէի ընտրութեան վերաբերութեամբ։

—Աւստրօ-Ունդարիայի սահմաններում բնակվող ազգութիւնների մէջ նորից առաջ են գալիս զանազան թշնամական ցոյցեր միմանց վերաբերութեամբ։ Վիէննայի լրագիրները այդ առիթով այն միտքն են յայտնում, որ այդ ներքին խառնաշփոթութիւնները կարող են վնասել կառավարութեան արտաքին քաղաքականութեանը։

—Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ պարսից Նասր-Էդդին շահը առ այժմ հրաժարվել է Եւրօպա ճանապարհորդելու իր մտադրութիւնից։ «Nordd. Allg. Zéitung» լրագիրը խօսելով նոյն հարցի մասին, յայտնում է, որ հաստատ աղբիւրներից տեղեկութիւն ունի, որ այդ ճանապարհորդութիւնը դալ տարի չի կատարվի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 նոյեմբերի։ «Восточное Обозрѣніе» լրագիրը 1888 թուի յունվարից փոխանակ Պետերբուրգում հրատարակվելու, կը հրատարակվի Իրկուտսկում, որտեղ արդէն ուղևորվեցաւ Պետերբուրգից խմբագիր Եաղրինցեվ։—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ արդարադատութեան մինիստրութեան մէջ մշակվում է մի նախագիծ դատարանական աստիճանաւորների տարիքների վերաբերութեամբ։ Ենթադրութիւն կայ հետեւեալ տարիներով սահմանափակել ծառայութեան մէջ եղողներին. դատաստանական քննիչի համար՝ մինչև 55 տարեկան հասակը, նահանգական դատարանի անդամի համար մինչև 60, և դատաստանական պալատի անդամի համար մինչև 65 տարեկան հասակը։

ԲԵՐԼԻՆ, 24 նոյեմբերի։ «Post» լրագիրը ասում է, որ Սաղի-կարնօի ընտրութիւնը կուսակցական գործ է, և որ նա իր պաշտօնում չի մնայ մինչև գարուն։ «National Zeitung» գրում է, որ Գերմանիան գոհ է այն պատճառով, որ ֆրանսիական հանրապետութեան նախագահ է ընտրվել մի լուրջ մարդ։ «Vossische Ztg.» այդ ընտրութեան մէջ տեսնում է խաղաղութեան գերաւական, բայց յիշում է կայսրի խօսքերը, թէ Գերմանիան խաղաղութիւն ցանկանալով հանդերձ, կարող է դիմադրել ամեն տեսակ վտանգներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 նոյեմբերի։ Ստէարլինի մամի վրա ակցիզ դնելու վերաբերութեամբ տարածված լուրերի պատճառով, ֆինանսների մինիստրութիւնը յայտարարում է, որ այդպիսի ակցիզ դնելու մտադրութիւն չը կայ։—Սենատի քննութեանն է ներկայացրած Օրէնսդր. քաղաքաց. ծառ. III հատորի 248 յօդուածի փոփոխութեան հարցը, որի հիման վրա, ուսուցչական պաշտօնի մէջ հաստատվող անձինք ստանում էին ոչ ի հաշիւ ռոճկի՝ պետական գանձարանից իրանց ռոճկի երրորդ մասը։—Ֆինանսների մինիստրութիւնը յայ-

տարարում է, որ մինիստրների մասնաժողովը վճռել է հետևեալը. 1) թոյլ տալ Ռուսաստանում գործող արտասահմանեան ակցիոներական ընկերութիւններին, առանց առանձին բարձրագոյն թոյլտուութեան,— որոնց տրված են եղել առևտրական դոկումենտներ 1887 թւի համար, որ ստանան այդպիսի դոկումենտներ 1888 թւի համար և 2) յայտնել այն ընկերութիւններին, որոնք դեռ խնդրատու չեն եղել իրանց գործողութիւնները շարունակելու թոյլտուութիւն ստանալու համար, որ անհրաժեշտ է նրանց համար առանձին թոյլտուութիւն ստանալը, և այդ բանի համար ժամանակ տալ մինչև 1888 թւի մայիսի 1-ը. իսկ այդ ընկերութիւններից նրանք, որոնք խնդրամատոյց չեն լինի,—պարտաւորված կը լինին վերջ տալ իրանց առևտրական գործունէութեանը Ռուսաստանում, մինչև 1889 թւի յունվարի 1-ը:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 24-ին

Ռուսաց 1 բուբլի լծողների վրա արժէ		$21^3/_{16}$	պէնս.	
—	—	Համբուրգի վրա —	$179^3/_4$	պֆ.
—	—	Փարիզի վրա —	$224^1/_8$	սան.
Ոսկի —	արժէ —	. .	9 ›	— կ.
Մաքսային կուպոններ —		. .	179 ›	75 ›
Արծաթ —	— —	. . .	1 ›	32 ›
Բորսային դիսկոնտներ —		. .	$5^3/_4$ և	› $7^0/_0$ ›
Պետական. քանկ. $5^0/_0$ տոմս 1-ին չրջանի			100 ›	— ›
— — — — 2-րդ	—		98 ›	25 ›
— — — — 3-րդ	—		97 ›	75 ›
— — — — 4-րդ	—		97 ›	87 ›
— — — — 5-րդ	—		97 ›	75 ›
— — — — 6-րդ	—		— ›	— ›
Արևելեան $5^0/_0$ փոխառութ. 1-ին չրջ.			97 ›	50 ›
— — 2-րդ	—		97 ›	50 ›
— — 3-րդ	—		97 ›	50 ›
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.			278 ›	— ›
— երկրորդ	—		248 ›	— ›
$5^1/_2{}^0/_0$ րէնտա			103 ›	— ›
Ոսկեայ րէնտա			194 ›	— ›
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն			163 ›	50 ›
Նոր երկաթուղային րէնտա . . .			97 ›	87 ›
$5^0/_0$ գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.			168 ›	— ›
Գրաւ. թղ. Աղնս. բանկի . . .			98 ›	— ›
$5^1/_2{}^0/_0$ գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի.			98 ›	62 ›
$6^0/_0$ գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.			101 ›	50 ›
— — Պոլտավայի—	—		101 ›	12 ›
— —Պետ.Ցուլսկ.—	—		101 ›	12 ›
— — Կիեւի —	—		101 ›	12 ›
— — Մոսկվայի —	—		101 ›	— ›
— — Բեսարաբ. Տավր.—			101 ›	— ›
— — Նիժ. Սամար.	—		101 ›	— ›
— — Վիլնայի	—		100 ›	87 ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.			— ›	— ›
— —Քութայիսի-18 և 43 տ.			— ›	— ›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները			714 ›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.			264 ›	— ›
Բիբինսկ-Վոլոգովի ընկ.			82 ›	25 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.			94 ›	12 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .			93 ›	50 ›
Օդեսայի — — .			93 ›	25 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .			— ›	— ›
Նոր փոխառութիւն.			82 ›	37 ›

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ“

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Գինն է 30 կոպէկ

Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և հետևեալ տեղերում. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կենտրոնական և ուրիշ գրավաճառանոցներում, ԵՐԵՒԱՆՈՒՄ՝ Կ. Դատամեանի խանութում, ԲԱԳՇՈՒՇԻ՝ Դաղեան եղբայրների գրավաճառանոցում, ՆՈՒԽԻ՝ ուսուցիչ Ն. Դաւթեանի մօտ, ԱԳՈՒԼԻՍ՝ ուսուցիչ Լևոն Թադէոսեանի մօտ, ԱԼԷՔՍԱՆԴԱՊՕԼ՝ Վեհապետեանի խանութում: Օտարաքաղաքացիք այդ գիրքը ստանալու համար պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Х. Малумянцу, въ редакцію Мшакъ. 1—10

Հիւանդութեանս պատճառով Թիֆլիսից տեղափոխվելով Հայրենիքս՝ Շուլավէր, այս տարի ընդհատում եմ „Երախայրիքի“ երրորդ և չորրորդ գրքերի հրատարակութիւնը: Բաժանորդները թող անհոգիտ լինեն, որ կը ստանան և այդ գրքերը: Իր ժամանակին կը յայտարարվի այդ մասին: „Երախայրիքի“ երրորդ և չորրորդ գրքերը հրատարակելուց յետոյ՝ անմիջապէս կը տպագրվի Սրինգի „Բանաստեղծութիւնների“ առաջին հատորը:

Ի միջի այլոց յայտնում եմ, որ „Երախայրիքի“ առաջին և երկրորդ գրքերը վաճառվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում, Բէհբութեանի և Աբգ. Յովհաննիսեանի գործակալութեան մէջ և նրա բաժանմունքներում, Բագուում՝ պ. Սարգիս Շիրազեանի, և ինձ մօտ: Նոր բաժանորդ գրվողները չորս գրքի համար վճարում են 1 բուբլի 50 կոպէկ, իսկ աշակերտները և աշակերտուհիները՝ 1 բուբլի:

Ինձ դիմողները այսուհետև նամակների հասցէն այսպէս պէտք է գրեն. Въ Шулаверъ (Черезъ Бѣлый-Ключъ) Аршаку Меграбянъ.

Արշակ Մեհրաբեան

1—1

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ КОРОБКА 50 и 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՖԻԶՕՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկերի, Սէնչիկօվսկու և Ազմուրովի դեղատներում: ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ Բէկկերի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ: (Հ.)

Hotel Nemecki Edmunda Dziechcinskiego, Warszava, Ulica Dluga, № 31.
(Нѣмецкая гостинница Эдмунда Дзехцинскаго, въ Варшавѣ, Долгая улица, № 31).

Պ. Էդմունդ Դզեխցինսկու «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑԸ» Վարշավայում, գտնվում է քաղաքի կենտրոնում, գլխաւոր կառավարչական ատեանների, թատրոնների և առևտրական կենտրոնական տեղերի մօտ:

90 սենեակներ, 30 կոպէկից մինչև 3 բուբլի օրական գնով: Բէֆտօրան և քաղցրեղէնների խանութ: Ճաշը 30 կոպէկից մինչև 1 բուբլի: Կառքեր և դիլիժանսներ դէպի բոլոր երկաթուղիները: Կառքերի վարձը չատ էժան:

Գրադարան և օտար լրագիրներ՝ ձրիապէս հիւրերի համար: «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑԸ», որ յաճախված է բազմաթիւ հիւրերով Թիֆլիսից և նրա չրջականներից, ստանում է այդ հիւրերի համար հայոց «ՄՇԱԿ» լրագիրը:

(Հ)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ:

ՀԱՆՔԱՅԻՆ ՁՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիչերի մէջ նոր ածված: ՅԵՑԻՑ ԵՒ ՄԻԶԱՏՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՂ. ՄԻԶՈՑՆԵՐ, Նաֆթալին, քսմֆօրա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը:

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ պրօֆէսօր ԿԻՏՏԱՐԱՑԻ, կարբոլացրած փոշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը խտակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլօրային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարգանեցի կրկնաթթուտ:

75—100 (Հ.)

ОТКРЫТА ПОДПИСКА НА ЖУРНАЛЪ ПОПУЛЯРНОЙ МЕДИЦИНЫ И ГИГІЕНЫ

„МЕДИЦИНСКАЯ БЕСѢДА“

„Медицинская Бесѣда“ имѣетъ цѣлью знакомить общество черезъ посредство общедоступныхъ (популярныхъ) статей съ современнымъ направленіемъ врачебной науки и съ желательною постановкою врачебнаго дѣла. Земскіе санитарно-медицинскіе вопросы, статьи по общественной и частной гигіенѣ, популярныя статьи по различнымъ отраслямъ врачебной науки, школьная гигіена, аптечное дѣло, статьи по различнымъ отраслямъ естествознанія, врачебныя замѣтки и хроника, библіографія, историческія свѣдѣнія и замѣтки—*вотъ основная часть программы журнала.* „Медицинская Бесѣда“, имѣя разносторонную, обширную программу, будетъ служить, какъ и въ прошедшемъ году, *въ одинаковой степени интересамъ врачей и публики.* Журналъ выходитъ два раза въ мѣсяцъ. Цѣна за годъ съ пересылкой 4 р. 50 к., за полъ года—3 р. *Подписка* на 1888 годъ *принимается въ г. Воронежѣ, въ конторѣ редакціи.*

Редакторъ—издатель **А. Х. Сабининъ.**

Խնդրում եմ այն բոլոր անձինքներին, որոնք վաճառում են իմ կազմած „ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ“ գիրքը, որ բարեհաճեն ուղարկել ինձ վաճառած գրքերի հաշիւը և փողերը: Վերադարձած լինելով Թիֆլիս, այժմ պէտք է դիմել ինձ այս հասցէով. Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խ. Մալումեան

ЗАЗЗТАРАРОՒԹԻՒՆՆԵՐ

„ДОНСКАЯ ПЧЕЛА“
годъ (XIII)

Какъ и въ теченіи минувшихъ двѣнадцати лѣтъ, будетъ выходить два раза въ недѣлю, по четвергамъ и воскресеньямъ. Цѣль газеты—служеніе интересамъ При-азовскаго края: разработка вопросовъ, касающихся экономической жизни этого края, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій, текущія явленія и мѣстныя новости. Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей—въ „Донской Пчелѣ“ имѣетъ всегда обширное мѣсто. Торговый отдѣлъ „Донской Пчелы“, въ которомъ помѣщаются коммерческія свѣдѣнія, доведенъ до самыхъ широкихъ размѣровъ. Онъ особенно важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской областей, Екатеринославской, Воронежской и Ставропольской губерній, гдѣ „Донская Пчела“ уже успѣла получить достаточную популярность, какъ необходимое подспорье для торговыхъ сдѣлокъ.

Подписная цѣна:

Съ доставкою въ Ростовѣ на-Дону.		Съ пересылкою иногороднимъ.	
на годъ	6 р. —	на годъ	7 р.
„ полгода	3 „ 50	„ полгода	4 „ —
„ 3 мѣсяца	2 „ —	„ 3 мѣсяца	2 „ 50

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи „Донской Пчелы“, въ Ростовъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ Гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

ПРЕМІЯ. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 10-го Декабря сего 1887 года подписныя деньги за 1888 годъ, будетъ разосланъ БЕЗПЛАТНО Донско-Азовскій русско-армянскій календарь на 1888 годъ.

Редакторъ-Издатель **И. А. Тер-Абраміанъ.**

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, դեկտեմբերի 9-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRÈLIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, Նախկին Արծրունի գալերէում, № 103.

1—4

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 4 դեկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ MENDOZA (ՄԷՆԴՕԶԱ) նաւապետ LARTIGUE (ԼԱՐՏԻԳ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա:

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԷԶՈՒԲԵԱՆ ՀԷԶՈՒԲԵԱՆՑ:

1—3

ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(Вѣнскій магазинъ)

Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Մդիվանիի տանը, առաջին կլասիական գիմնազիայի դիմաց:

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանն, որ ՄՕՏ ՕՐԵՐՍ ստացել եմ զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ տղամարդկանց և երեխայոց աշնանային և ձմերային ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի: Ամենի համար գները մատչելի և ձեռնտու են:

8—12

Վ. Խուդավերդեանց

Дозволено цензурою, Тифлисъ 25 ноября 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.